

ՇՊՀ «ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՀԱՆՐԵՍ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

ՇՊՀ «Գիտական տեղեկագիր» հանդեսում տպագրման համար աշխատանքը հանձնելուց հետո 10 օրվա ընթացքում այն անցնում է տեխնիկական գրախոսման փուլ: Այն աշխատանքները, որոնք կբավարարեն հրատարակման կարգին, կուղարկվեն արտաքին գրախոսության, հակառակ դեպքում՝ կվերադարձվեն հեղինակներին՝ տեխնիկական մասը համապատասխանեցնելու համար: Հանդեսում կտպագրվեն արտաքին գրախոսողների կողմից դրական կարծիքի արժանացած հոդվածները:

Հոդվածների երկու տպագիր օրինակների հետ միասին հարկավոր է ներկայացնել էլեկտրոնային տարբերակը Word (Word 2003-2010) միջավայրում՝ CD կրիչով: Աշխատանքները հարկավոր է ներկայացնել Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան՝ Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոն (պատասխանատու քարտուղար՝ Լիլիթ Մարգարյան). հասցե՝ ք. Գյումրի 3126, Պարույր Սևակ 4, հեռ. 098 25 18 26, էլ. հասցե. gspi.science@gmail.com, shsu.science@gmail.com.

ՇՊՀ «Գիտական տեղեկագիր» հանդեսում հրատարակվելու համար ներկայացվող աշխատանքը պետք է բավարարի ներքոնշյալ պահանջներին.

1. հոդվածների ներկայացման լեզուները՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն,
2. թուղթը՝ A4 ձևաչափի, գրքային (книжный),
3. լուսանցքի չափերը՝ վերնից, աջից, ձախից՝ 4 սմ, ներքևից 5 սմ,
4. տառատեսակը՝ Times New Roman, Sylfaen,
5. տառաչափը՝ 12pt,
6. միջտողային հեռավորությունը՝ 1 (одинарный), հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине),
7. հոդվածը հարկավոր է շարադրել հետևյալ հերթականությամբ՝
 - բնագավառը,
 - ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման) կոդը (УДК),
 - հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը՝ հոծ (жирный), հավասարեցումը՝ կենտրոնացված (по центру), տառաչափը՝ 12pt, մեծատառերով, 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն,
 - հոդվածի հակիրճ բովանդակությունը՝ 5-7 տող, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине), 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն,
 - բանալի բառերը՝ մինչև 10 բառ, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине), 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն,

- նախարան (введение)՝ հողվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում և արդիականության հիմնավորում (1 էջը չգերազանցող),
- հողվածի հիմնական բովանդակությունը,
- եզրահանգում (заключение)՝ աշխատանքում ստացված հիմնական արդյունքների ներկայացում (0,5 էջը չգերազանցող),
- հետևյալ ձևաչափերին համապատասխան գրականության ցանկ.

Գրքեր.

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Будак Б. М., Фомин С. В. Кратные интегралы и ряды. М.: Изд.-во «Наука». 1967. 608 с.
3. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986. 383 p.

Ամսագրեր/պարբերականներ/հանդեսներ.

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
2. Пальмов В. А. Основные уравнения теории несимметричной упругости // Прикладная математика и механика. 1964. Т. 28. Вып. 6. С. 1117-1120.
3. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics. 1973. Vol. 5. № 3. P. 547-561.

Ժողովածուներ.

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Ս. Ն. Հայերի մշակութային արժեքային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: էջ 80-83:
2. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
3. Kolesnikov A. M., Popov A. V. Pure bending of a pressurized curved tube // Proceedings of the International Conference Shell Structures: Theory and applications. 16-18 October, 2013. Gdansk, Poland. Taylor&Francis Press. London. 2014. P. 113-116.
8. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է ներկայացնել Math Type կամ MS Equation բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի՝(1), (2),...: Հավասարեցումը՝ կենտրոնացված (по центру), համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները

պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել:

9. Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:
10. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:
11. Գրաֆիկական նյութը պետք է լինի հստակ, սև-սպիտակ երանգավորմամբ և չպահանջի լրացուցիչ խմբագրում: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս): Գրաֆիկները ևս պետք է վերնագրվեն և համարակալվեն:
12. Հոդվածում պարտադիր են հղումներ գրականության ցանկում նշված բոլոր աշխատանքներին՝ [1], [2-4]...
13. Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 10 էջը: Բոլոր էջերը պետք է համարակալվեն ներքևից, կենտրոնում:
14. Հոդվածի վերջին էջում (մի օրինակի վրա) պետք է առկա լինեն բոլոր հեղինակների ստորագրությունները:
15. Հրատարակման մերժման դեպքում խմբագրական խորհուրդն իրավունք է վերապահում չվերադարձնել հեղինակին հոդվածի մի տպագիր օրինակը:
16. Առանձին փաստաթղթով (“сведения об авторе”), հոդվածի լեզվով հարկավոր է ներկայացնել սպառիչ տեղեկություններ հեղինակի (հեղինակների) մասին՝ նշելով անուն, ազգանուն, հայրանուն (լիովին), աշխատավայր, պաշտոն, գիտական աստիճան, կոչում, հեռախոս, էլեկտրոնային հասցե (e-mail):